Ֆեդերալ առևտրի հանձնաժողով(Federal Trade Commission)
Պաշտպանություն Ամերիկայի սպառողներին

## Փաստեր սպառողների համար

# Համացանցային հաղորդակցության կայքէջ. Ծնողի ուղեցույց

"Երեկոյան ժամը 10-ն է, արդյոք գիտե՞ք թե ձեր երեխաներն որտեղ են: "

Հիշում ե՞ք այս ասացվածքը ձեր սեփական մանկությունից: Դա դեռ ընդունելի հարցադրում է, բայց այժմ տարբերակված ձևով՝. "Դուք գիտե՞ք թե ձեր երեխաներն որտեղ են- և ու՞մ հետ են նրանք զրուցում ինտերնետով:"

Համացանցային հաղորդակցության կայքերը ձևափոխվելով դարձել են հիմնական հաղորդակացության միջոց անչափահասների և չափահասների համար: Այս կայքերը խրախուսում և հնարավորություն են տալիս մարդկանց միմյանց տեղեկություններ հաղորդել իրենց մասին, փոխանակել նկարներ և տեսահոլովակներ, անձնական օրագրեր և անձնական հաղորդագրություններով հաղորդակցել ընկերների և երկրագնդի լայն տարածքով սփռված հետաքրքրություն ցուցաբերող անձանց հետ:

Որոշ համացանցային հաղորդակցության կայքերը գրավում են նախապատանեկան հասակի, նույնիսկ փոքր երեխաների, ինչպիսին՝ 5 կամ 6 տարեկանների հետաքրքրությունը: Այս փոքր երեխաների համար նպատակադրված կայքերը, նույն տեսակի հաղորդակացություն չեն թույլատրում, ինչպիսին թույլատրվում են պատանիներին կամ չափահասներին, բայց ծնողները դեռ կարիք ունեն բայլեր ձեռնարկելու, որպեսզի իրենց երեխաները անվտանգ հաղորդակցվեն: Փաստորեն, երբ խնդիրը վերաբերվում է փոքր երեխաներին, օրենքը որոշ ապահովություն է տալիս, բայց իշխանության մի մասն էլ ծնողներին է տրվում, որպեսզի կառավարեն ինտերնետի միջոցով իրենց երեխաների ստանալիք տեղեկությունները: Այն կայքերը, որոնք նպատակադրված են 13 տարեկանից ցածր երեխաների համար, կարգավորված են Children's Online Privacy Protection Act-ի (COPPA) կողմից: Այս կայքերից պահանջվում է, որ համաձայնությունը ստանան ծնողներից, նախքան երեխայի մասին տեղեկություն ընդունելը, պահելը կամ այդ տեղեկությունն օգտարագործելը: COPPA-ն ծնողներին հնարավորություն է տալիս վերաքննել երեխայի մասին կայքում տեղադրված տեղեկությունները կամ օրագրերի էջերում արված գրանցումները:

Երբեմն ծնողներ իրենց հետամնաց են զգում տեխնոլոգիապես առաջադեմ իրենց երեխաների կողքին: Տեխնոլոգիան մի կողմ, բայց որպես ծնող կարող են երեխաներին սովորեցնել ինտերնետով անվտանգ հաղորդակցվելու մասին:

## Օգնեք երեխաներին անվտանգ հաղորդակցվել համակարգչի միջոցով:

Ֆեդերալ առևտրի հանձնաժողովը՝ սպառողների պաշտպանության գործակալությունը, պարտադրում է ծնողներին, որպեսզի խոսեն իրենց դեռահաս երեխաների հետ համացանցային հաղորդակցության կայքերի մասին և խորհուրդներ տան նրանց ինտերնետի կայքերից անվտանգ օգտվելու մասին:

- **Օգնեք ձեր երեխային հասկանալ թե ինչ անձնական տեղեկություններ պետք է գաղտնի մնան:** Նրան բացատրեք թե ինչու որոշ կարևոր տեղեկություններ իրենց, ընտանիքի անդամների և ընկերների մասին հարկավոր է գաղտնի պահել: Տեղեկություններ, ինչպիսիք են՝ նրանց անունը ու ազգանունը, սոցիալ սեքյուրիթի (Social Securiy) թիվը, տան հասցեն, հեռախոսի համար և ընտանիքի ֆինանսական տեղեկությունները, ինչպիսին են՝ բանկային կամ կրեդիտ քարտի հաշվեհամարները անձնական տեղեկություններն են և գաղտնի պետք է մնան: Ասացեք նրանց, որ չընտրեն էկրանի այնպիսի անուն, որը շատ անձնական տեղեկություններ է տալիս:

- **Օգտագործեք անձնական ծածկագրեր, որպեսզի սահմանափակեք ձեր երեխայի կայքէջը մուտք գործող և նրան տեղեկություններ թողնող անձանց ընտրությունը:** Որոշ համացանցային հաղորդակցության կայքեր խիստ անձնական գաղտնի կարգավորում ունեն: Ձեր երեխային ցույց տվեք թե ինչպես կարող է օգտվել այս կարգավորումներից, որպեսզի սահմանափակեք նրա կայքէջին տեղադրված անձնական տեղեկությունը և բացատրեք թե ինչու է կարևոր դա:
- **Բացատրեք, որ երեխաները պետք է կայքէջի վրա տեղադրեն միայն այն տեղեկությունները, որոնք դուք և նրանք կցանկանայիք, որ ուրիշները տեսնեն:** Նույնիսկ, երբ անձնական կարգավորումն ուժի մեջ է, որոշ կամ նույնիսկ բոլոր անձնական տեղեկությունները ձեր երեխայի մասին, հնարավոր է տեսնել առավել լայն հանդիսատեսի կողմից, քան դուք հարմար եք գտնում: Խրախուսեք ձեր երեխային, որ զգոն լինի օրագրում գործածած իր բառերի ընտրությունից, և խլամտորեն տեղադրի իրեն վերաբերվող նկարներն և տեսահոլովակները: Ձեռնարկատերերը, կոլեջի ընդունման պատասխանատու պաշտոնյաները, խմբավարները և ուսուցիչները կարող են ձեր երեխայի տեղադրածը տեսնել: Բացատրեք նրան, որ մտածի իր էկրանի անունն մասին և թե ինչ տպավորություն կարող է այն թողնել տեսնողի վրա:

- **Հիշեցրեք ձեր երեխաներին, որ երբ տեղեկություն տեղադրեն ինտերնետում, այլևս չեն կարող այն ետ վերցնել:** Նույնիսկ, երբ ջնջեն տեղադրած տեղեկությունը, ապա հին տարբերակը կարող է գոյատևվել այլ մարդկանց համակարգիչներում և դեռ ինտերնետային շրջանառության մեջ լինել:

- **Իմացեք թե ինչպես են ձեր երեխանները մուտք գործում ինտերնետ:** Ավելի և ավելի են շատանում այն երեխաների թիվը, որոնք իրենց բջջային հեռախոսից են ինտերնետ մուտք գործում: Տեղեկացեք թե ինչպես կարող եք սահմանափակել բջջային հեռախոսից օգտվելու նրանց ժամանակը: Որոշ բջջային հեռախոսի գործակալություններ ունեն ծրագրեր, որոնք սահմանափակում են ներլցումները (downloads), ինտերնետի մուտքը և բառաշարեր (texting) ուղարկելը, իսկ այլ ծրագրեր երեխաներին թույլատրում են այս հնարավորություններից օգտվել օրվա որոշ ժամերին միայն:

- **Ձեր երեխայի հետ կոպտաբարության մասին խոսեք:** Ինտերնետային կոպտաբարությունը մի շարք ձևերով կարող է հանդես գալ. խոսակցություններ տարածել և այն ինտերնետում տեղադրել կամ առանց թույլատվության անձնական տեղեկությունը վերահասցեավորել և մինչև իսկ սպառնալից հաղորդագրություններ ուղարկել: Բացատրեք ձեր երեխաներին, որ տպագրած բառերը և տեղադրված նկարները կարող են իրական կյանքի հետևանքներ ունենալ: Նրանք կարող են նպատակադրված կռվի հրավեր ստացած անձին վատ զգացմունքների մեջ և ուղարկողին վատ վիճակի մեջ դնել և երբեմն պատժի արժանացնել իշխանությանների կողմից: Խրախուսեք ձեր երեխային, որպեսի ձեզ հետ կիսի իր զգացմունքները, երբ մտահոգված է, որ իր դեմ հալածանք կա:

- **Ձեր երեխայի հետ խոսեք, որ խուսափի սեռային թեմաներ ինտերնետով արծարծելը:** Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ անչափահասները, որոնք ինտերնետով չեն արծարծում սեռային թեմաներ, քիչ հավանականություններ ունեն վտանգավոր անձանց հետ առնչվելուց:

  Եթե դուք մտահոգված եք, որ ձեր երեխան մխրճված է վտանգավոր ինտերնետային ցանցի մեջ, դուք կարող եք նրա կայքէջի օրագրում տեղադրած գրանցումները ստուգել: Փորձեք փնտրել նրան անունով, ածական անունով, դպրոցի անունով, սիրած զբաղմունքի անունով, դասարանի աստիճանով կամ շրջանի անունով ուր դուք եք ապրում:

- **Բացատրեք ձեր երեխային, որ իր ներքին զգացմունքներին վստահի, եթե կասկածելի որևէ բան է զգում:** Եթե նրանք սպառնանք են զգում ինչ որ մեկից կամ անհանգիստ են ինտերնետի վրա դրված ինչ որ մի բանից, խրախուսեք նրանց, որ ձեզ տեղեկացնեն: Դուք նրանց կօգնեք, որ դրա մասին ոստիկանությանը և Համացանցային հաղորդակցության կայքին տեղեկացվի: Շատ կայքեր ունեն կապի տարբեր միջոցներ, ուր օգրագործողները կարող են անմիջապես հայտնել ոտնահարումները, կասկածները կամ անհամապատասխան արտահայտությունները:

- **Կարդացեք կայքի գաղտնիության կանոնները:** Որոշ ժամանակ տրամադրեք կայքի գաղտնիության կանոնները, FAQs-ի և ծնողների բաժնի առանձնահատկությունները և գաղտնիության վերահսկումը հասկանալ համար: Կայքերը պետք է պարզորեն բացատրեն ձեր իրավունքները երեխայի գրանցածը վերանայելու և նրա պրոֆիլի ջնջելու մասին, եթե ձեր երեխայի տարիքը 13 տարեկանից ցածր է:

## Մի քանի լրացուցիչ խորհուրդներ ձեր նախադեռահաս զավակին

Վերևում նշված խորհուրդներից շատերը նախադեռահասներին է վերաբերվում, բայց ավելի փոքր երեխաների ծնողները նույնպես կարող են՝

- **Լրացուցիչ քայլեր վերցնեք, փոքր երեխաների պաշպանության համար:** Համակարգիչը տեղադրել բաց տարածքում, ինչպիսին խոհանոցը կամ ընտանեկան սենյակն է, որպեսզի դուք կարողանաք ձեր աչքը ձեր երեխայի վրա պահել և հետևել նրան երբ ինտերնետ է օգտագործում:
  Ինտերնետ նրա հետ գործածեք և օգնեք նրան, որ անվտանգ օգտվելու սովորություններ զարգացնի: Նկատի առեք և օգտվեք ծնողների բաժնի առանձնահատկություններից և գաղտնիության վերահսկումից, որը թույլատրում է ձեզ կառավարել ձեր երեխաների համակարգչից օգտվելու հանարավորությունները, ներառյալ նրանց այցելելիք կայքերը, թույլատրվում է ներլցել (download) նյութեր և թե օրվա որ ժամին կարող են ինտերնետից օգտվել:

- **Այցելեք ձեր երեխայի այցելած ինտերնետային կայքերը:** Գրանցվեք և օգտագործեք նույն Համացանցային հաղորդակցության կայքերը, որոնք ձեր երեխան է օգտագործում: Նրան տեղյակ պահեք, որ դուք հաղորկցության կապի մեջ եք, և սովորեցրեք նրան ինտերնետով ճիշտ հաղորկցվելու ձևը:

- **Ստուգեք ձեր երեխայի ընկերների ցանկը:** Կարելի է, որ դուք ցանկանաք սահմանափակել ձեր զավակի ինտերնետային «ընկերների» ցանկը, և թույլատրել միայն նրանց, որոնց ձեր զավակը անձնապես ճանաչում և ընկերություն է անում առօրյա կանքում:

- **Հասկացեք կայքերի գաղտնիության կանոների մասին:** Կայքերը պետք է պարզորեն բացատրեն ձեր իրավունքները. երեխայի պրոֆիլը վերանայելու և ջնջելու ձեր իրավունքը, եթե ձեր երեխայի տարիքը 13 տարեկանից ցածր է:

## Ի՞նչ կարելի է անել պրոբլեմի դեպքում

Ձեր երեխաներին խրախուսեք, որ ձեզ ասեն եթե նրանք սպառնանք են զգում ինչ որ մեկից կամ անհանգիստ են ինտերնետի վրա դրված ինչ որ մի բանից: Այնուհետև, ոստիկանություն հայտնեք և Համացանցային հաղորդակցության կայքերին տեղեկացրեք:
Children's Online Privacy Protection Act-ը (COPPA) կայքերից պահանջվում է, որ համաձայնություն ստանան ծնողներից, նախքան երեխայի մասին տեղեկություն ընդունելը, պահելը կամ այդ տեղեկությունն օգտարագործելը, երբ այն ուղղված է 13 տարեկանից ցածր երեխաներին: Եթե կայքերը խախտում են COPPA-ի կանոնները, ապա հարկավոր է Ֆեդերալ առևտրի հանձնաժողովին (FTC) տեղեկացնել:

## Լրացուցիչ տեղեկությունների համար՝

Ինտերնետային ապահով կայքերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, այցելեք հետևյալ կազմակերպությունների կայքեր:

**Ֆեդերալ առևտրի հանձնաժողով**
www.onguardonline.gov

FTC-ին աշխատում է սպառողների համար, որպեսզի խարդախ, խաբուսիկ և անիրավ գործարքներ արգելվեն շուկայում և տեղեկություններ է մատուցում, որպեսզի սպառողները նկատեն, դադարեցնեն և խուսափեն դրանից: Սպառողները բողոք ներկայացնելու կամ անվճար տեղեկություններ ստանալու համար կարող են այցելել՝ ftc.gov կամ զանգահարել անվճար՝ **1-877-**FTC-HELP (1-877-382-4357): TTY:1-866-653-4261 հեռախոսահամարներով. FTC-ին ղեկավարվում է OnGuardOnline.gov-ի կողմից, որը գործնական խորհուրդներ է տալիս ֆեդերալ կառավարության և տեխնոլոգիական արդյունաբերության մասին, պահպանելու ձեզ ինտերնետի խարդախություններից, անվտանգ պահելով ձեր համակարգիչը և պահպանելով ձեր անձնական տեղեկությունները:

Կապվել անվտանգ (ConnectSafely)
www.connectsafely.org

ConnectSafely-ը հավաքավայր է ծնողների, դեռահաս պատանիների, դաստիարակների և պաշտպանների համար, որը նախագծված է պատանիներին և ծնողներին հասարակայնորեն ձայնի իրավունք տալ, որ կարողանան քննարկեն ինտերնետ գործածող պատանիների անվտանգությունը, ինչպես նաև խորհուրդներ և այլ ռեսուրսներ տալ ապահով գրանցումների և համացանցային հաղորդակցության մասին:

Համացանցային հաղորդակցության կայքէջ. Ծնողի ուղեցույց

NetFamilyNews.org ծրագրի հետ համատեղ, սա ոչ եկամտաբեր մի ծրագիր է ծնողներին տեխնալոգիայի մասին տեղեկություններ տալու (Tech Parenting Group) մասին:

**Cyberbully411**
www.cyberbully411.org

Cyberbully 411-ը ռեսուրսներ է տրամադրում և քննարկման պատեհություն է տալիս պատանիներին և նրանց ծնողներին, ովքեր հարցեր ունեն և կամ իրենց դեմ ուղղված ինտերնետային ոտնձգություններից են վտանգվում: Կայքէջը կազմավորվել է ոչ եկամտաբեր ինտերնետային՝ Լուծումներ երեխաների համար կազմակերպության (Solutions for Kids, Inc.) կողմից, որը նպաստավորվում է Կալիֆորնիայի Համայնքային տեխնալոգիայի հաստատության (Communniy Technology Foundation) կողմից:

**GetNetWise (ինտերնետից օգտվել խոհեմորեն)**
www.getnetwise.org

GetNetWise-ը հասարակական ծառայությունները է մատուցում: Այն հովանավորվում է ինտերնետի արդյունաբերական ընկերությունների և հասարակության շահերը պաշտպանող կազմակերպությունների կողմից, վստահեցնելու, որ ինտերներտից օգտվողները ապահով, կառուցողական և ուսումնական փորձառություններ կստանան ինտերնետից օգտվելիս: GetNetWise կոալիցիան աշխատում է ինտերնետ օգտագործողների կարիքների համար ռեսուրսներ մատուցել, որպեսզի ինտերնետից օգտվողները կարողանան գիտակցված որոշումներ կայացնել իրենց և իրենց ընտանիքների համար:

**Internet Keep Safe Coalition (Ինտերնետը անվտանգ պահելու կոալիցիա)**
www. iKeepSafe.org

iKeepSafe.org-ը 49 նահագապետներից/առաջին տիկիններից, իրավապահ մարմիններից, the American Medical Association-ից (Ամերիկյան բժշկական կազմակերպություն), the American Academy of Pediatrics-ից (Ամերիկյան մանկական ակադեմիա) և այլ կազմակերպություններից կազմված մի կոալիցիա է, որոնք նվիրված աշխատանքներ են տանում, ծնողներին, դաստիարակներին և խնամակալներին գիտելիքներ և ուղեցույց տալու, որպեսզի նրանց երեխաներն անվտանգ օգտվեն ինտերնետից և տեխնալոգիայից:

**National Center for Missing and Exploited Children (Անեվանգված և շահագործման ենթարկված երեխաների համազգային կենտրոն)**
www. missingkids.com;www.netsmartz.org

NCMEC-ին մասնավոր, ոչ եկամտաբեր մի կազմակերպություն է, որն օգնում է կանխել անհայտացումն և սեռական ոտնձգությունները երեխաների հանդեպ, ինչպես նաև աջակցում՝ առեվանգված և սեռական ոտնձգությունների ենթարկված տուժվածները և նրանց ընտանիքներին և նրանց ծառայություններ մատուցող մասնագետներին:

**Staysafe**
[www.staysafe.org](http://www.staysafe.org)

Staysafe.org-ը ուսումնական կայք է, որը նպատակադրված է օգնել սպառողներին հասկանալ ինտերնետի դրական կողմերը և ինչպես կարգավորել դեկավարման անվտանգ և ապահով տարբեր խնդիրները, որոնք առկա են կայքերում:

**Wired Safety (անվտանգ հաղորդակցվել)**
[www.wiredsafety.org](http://www.wiredsafety.org)

WiredSafety.org ինտերնետային անվտանգության և օգնության մի խումբ է: WiredSafety.org-ը ուսուցում, օգնություն և տեղեկություններ է տալիս սայբր հանցագործության և շահագործման, անձնական անվտանգության և պահպանման և պատասխանատվությամբ տեխնալոգիան օգտագործելու մասին: Դա նույնպես անչափահաս երեխաների ծնողներից կազմավորված մի խումբ է, Teenangels.org. , իր մեջ ներգրավված ունենալով պատանիներ և նախապատանեկան հասակի երեխաներ, որոնք պատրաստումներ են ստացել FBI-ի կողմից, որպեսզի նպաստեն ինտերնետի անվտանգությանը:

FTC-ն աշխատանքներ է տանում արգելու խարդախ, խաբուսիկ և անիրավ գործարքները շուկայում և տեղեկություններ է տալիս սպառողներին, որպեսզի նկատեն, դադարեցնեն և խուսափեն այդ արարքներից: Բողոքագիր ներկայացնելու կամ սպառողների հետ կապված խնդիրների մասին անվճար տեղեկությունները ստանալու համար կարող եք այցելել ftc.gov կամ զանգահարել անվճար՝ **1-877-**FTC-HELP (1-877-382-4357) հեռախոսահամարներով: Դիտեք How to File a Complaint, տեսանյութը ftc.gov/video կայքէջում, տեղեկություններ ստանալու համար: FTC-ին կգրանցի սպառողի բողոքագիրը Consumer Sentinel Network-ի մեջ: Ապահովելության համար այն օգտագործում է հարյուրավոր քաղաքացիական և քրեական իրավապահ գործակալների Ամերիկայի միացյալ նահանգների և այլ երկրների ինտերնետային տվյալների բազան և հետաքննության տվյալներ:

**Սեպտեմբեր 2007**

---

**Վերջին ճևափոխումը՝ ուրբաթ, Ապրիլ 24-ին, 2009թ.**